

Փ Ո Ւ Ն Ա Ռ ՈՒ Թ Յ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Չ Ի Ր

ք. Երևան

«09» Յոկտեմբերի 2009թ.

Հենրիկ Զախարյանցը այսուհետև՝ «Փոխատու», մի կողմից և «ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Շահեն Ստեփանյանի այսուհետև՝ «Փոխառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Փոխատուն, որպես սեփականություն, Փոխառուին է տրամադրում անտոկոս փոխառություն շրջանառու միջոցների համալրման նպատակով՝ մինչև 150,000,000 (հարյուր հիսուն միլիոն) դրամի չափով, որը կարող է տրամադրվել դրամով, կամ արտարժույթով վճարման օրվա կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով իսկ Փոխառուն պարտավորվում է Փոխատուին վերադարձնել նույն չափով, կամ մարման օրվա կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքին համարժեք դրամական միջոցները:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված փոխառության գումարը Փոխառուին է տրամադրվում մինչև մեկ տարի ժամկետով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Փոխատուն պարտավորվում է սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամական միջոցները Փոխառուին տրամադրել սույն պայմանագրի ստորագրման պահից սկսած՝ ըստ անհրաժեշտության:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.2. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի համաձայնությամբ: Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն Փոխատուի և Փոխառուի կողմից:

3.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

3.4. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Փոխառու»

«ՎԱԼԼԵՏՏԱ» ՍՊԸ

«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ

ք. Կապան Բաղաբերդի 2ա/2

«Փոխատու»

Հ. Զախարյանց

Անձնագիր AK 0304372 25/09/2009 059

Տնօրեն

Շ. Ստեփանյան

Հ. Զախարյանց